Դասարանական դրութեան ժամանակն աշակերտները միշտ միևնոյն ուսուցչի հետ պարապելով, զրկւում են այն զուարթացնող փոփոխութիւններից, որը պատահում է երբ սովորեցնում են մի քանի ուսուցիչներ. Իւրաքանչիւր ուսուցիչ մտնում է դասարան իբրև անհատ, բերելով իւր հետ մի նոր զուարթութիւն.

3. Այն ուսումնարաններում ուր միայն մի ուսուցիչ է հարկաւոր լինում զօ. տարրական ուսումնարաններից շատերում, ինհարկէ կարելի է գործադրել միմիայն դասարանական դրութեամբ դասաւանդութիւնը.

Գալով միջնակարգ ուսումնարաններին՝ պէտք է ասել որ՝ մի քանիսում դասարանական դրութիւնը բաւականին յարմարութեան են հասցնում, միևնոյն ժամանակ որչափ կարելի է հեռացնում են նորա անյարմարութիւնները համեմատ առարկաները մի ուսուցչի յանձնելով, զօ. աշխարհագրութիւն և պատմութիւն (հայրենիքի և ուրիշ աշխարհների), հին կամ նոր լեզուները. Նոյնպէս ուսուցիչներից ամէն դասարանին առանձին դասախարակ նշանակելով, որոնք ամենից շատ դասեր ունին նոյն դասարանում. Դասարանի դասախարակն աշխատում է սովորեցնել իւրեան յանձնուած աշակերտներին հսկել նոցա բարոյական և մտաւոր զարգացման վերայ. ուշադրութիւն է դարձնում ինչպէս տնական՝ այնպէս էլ դպրոցական պարապմունքների վերայ ևլն. և այսպիսով գործում է յօգուտ աշակերտների այն՝ ինչ որ կարող է անել դասարանական ուսուցիչը դասարանական դրութեամբ.

(Թարգմանութիւն) Գերմ. ձեռ. Ա. Լաւրանէ Ոսանով

ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՆԱՅԵԱՆՑ.

# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

## Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ

### ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

(Շարադրեաց. Տէր Արսէն, 1881 Մայիս.)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆՔ, ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ, ԱՐՏԱԿ ԵՒ ՏԱՃԱՏ.

ՎԱՐԴԱՆ.

Հրամայեցէք պատուական նիզակակիցք իմ, ձեզ ենք սպասում, որպէս զի միաբան վճռենք յառաջ խաղալ. Պարսից բանակը Միհրներսէհի և Մուշկան Նիւսալաւուրտի առաջնորդութեամբ արշաւում է Հայաստան

վերայ, բառնալ Քրիստոնէութիւն և հաստատել Մազդեզանց կրօնն, ինչպէս արդէն ստուգել են մեր հաւատարիմ լրտեսներն և հաստատում ներքինի Միհրանի այս նամակը, որի մէջ յայտնել է նաև Վասակայ դաւաճանութիւնը և նորա յուսոյ ունայնութիւնը: (Ցոյց տալով նամակն:)

ԱՐՏԱԿ.

Մեք արդէն համաձայն եմք Խորհրդի վճռին, մեր վերջին հրաժեշտը տուինք մեր ընտանեաց, ամենայն ինչ կազմ է և պատրաստ, միայն ձեր որոշման ենք սպասում:

ՀՄԱՅԵԱԿ.

Եսականութիւնը մեզ այս թշուառ դրութեան հասցրեց, ազգն մահուան կամուրջի վերայ կանգնեցրեց. անշուշտ խրատուեցանք, պէտք է միաբանենք մեր ընտրած և որոշած գլխոյդ, ընդհանուր սպարապետից բոլոր հրամանաց հնազանդելով:

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Եսականութիւնը Մազդեզանց օրէնքից աւելի պիղծ է և վնասակար թէ հոգւոյ և թէ մարմնոյ. Պարսիկն այնչափ վնասակար չէ մեզ, որքան մեր եսականութիւնը:

ՏԱՃԱՏ

Հայոց տիրասիրութիւնը ծանօթ է աշխարհի, մենք սովորել ենք օտար տիրոջն անգամ հնազանդելու, միթէ մեր բնիկ գլխոյն պիտի հակառակե՞նք:

ԽՈՐԷՆ.

Տէր սպարապետ, ինչ որ օգտակարն է ազգի և եկեղեցւոյ պաշտպանութեան, հրամայէ մեզ, մեք յօժարակամ պատրաստ եմք հնազանդել և գործադրել:

ՏԻՐՈՑ.

Գրեթէ միշտ այդպէս է եղել, Հայեր ոչխարի պէս հետևել են իւրեանց առաջնորդին, թէև դէպի վնասն առաջնորդած լինի, վնասակար խորհրդի և գործի մէջ միաբանում են Հայեր, իսկ օգտակարի մէջ եսութեան դրոշակ են պարզել:

ԴԱՏԻՇՈՅ.

Երբ դուք բոլորդ միաբանել էք պատերազմել, մեք հարկադրուած եմք հետևել ձեր խորհրդին, թէև վնաս լինի հայրենեաց և ազգին. Ուրեմն կարգադրեցէ՛ք զօրքն ինչպէս և կամիք:

ՎԱՐԴԱՆ.

Կարգադրութիւններն և զօրաբաժնի զօրապետներ ընտրելն քաջ Նիզակակցացդ է պատկանում, որ հայրենի կարգաւ, պատուով և իշխանութեամբ վեր էք Մամիկոնեան տոհմից:

ԱՐՏԱԿ· ՀՄԱՅԵԱԿ· ԳԱՐԵԳԻՆ·

*Ձեր ընտրութեանը մեք յօժար և համաձայն եմք, վասն զի մեք մեր յօժար կամօք զքեզ ընտրել եմք մեզ առաջնորդ և գլուխ։*

ԳԱՏԻՇԱՑ ԵՒ ՏԻՐՈՑ·

*Որովհետև բոլորի կամքն այն է, որ դուք ինքնահաճ ընտրութիւն անէք, մեք ևս համաձայն եմք ձեր ընտրութեանն։*

ՎԱՐԴԱՆ·

*Քաջազո՛ւն Տեարք, ես ձեր խորհրդով և հաւանութեամբ կամենում եմ այսպէս կարգադրել. «բանակը չորս զօրաբաժին լինի, Ա. զօրաբաժնի զօրապետ լինի Ներշապուհ իշխան Արծրունեաց և նորա օգնական Արտակ իշխան Մոկաց, և միւս Նախարարք Արծրունեաց և Մոկաց իւրեանց գնդերովն և համամիտներովն հանդերձ կամաւորներով արանց և կանանց նոյն աշխարհաց, Բ. զօրաբաժնի զօրապետ լինի Խորէն Խորխոռունի և նորա նիզակակից՝ Ներսէհ Քաջբերունի իւր գնդովն ու կամաւորներովը, Գ. զօրաբաժնի առաջնորդ լինի Թաթուլ Վանանդեցին, նորա օգնական լինի Տաճատ Գնթունին իւր գնդովն ու կամաւորներովը, Իսկ Դ. զօրաբաժինն ես վեր կառնում և ինձ օգնական՝ Արշաւիր Արշարունին և իմ եղբայր Համազասպեանն»։ Հաւա՞ն էք այս ընտրութեան։*

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ· ԽՈՐԷՆ· ՀՄԱՅԵԱԿ· ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ԱՐՏԱԿ

*Այո՛, այո՛, արդար ընտրութիւն։*

ԳԱՏԻՇՈՑ ԵՒ ՏԻՐՈՑ·

*Արծրունեաց, Քաջբերունեաց և Վանանդայ իշխանները ներկայ չէին, ստացան աւագութեան պատիւ, մեք երկուքս իբրև տկար և անարգ՝ յետաձգեցանք։*

ՎԱՐԴԱՆ·

*Աւագութեան պատիւն արդէն ունէին ըստ հայրենի կարգին, իսկ այս պատերազմի մէջ աւագ և կրտսերն նոյն պատիւն ունին, իւրաքանչիւր ոք իւր սրտի և յօժարութեան համեմատ վարձ կստանայ երկնաւոր Հանդիսադրէն, մարմնաւոր վարձուց ակնկալութիւն չկայ։*

ՏԻՐՈՑ·

*Եթէ յաղթենք, ո՞չ ապաքէն իւրաքանչիւր զօրապետն ըստ աւագութեան աստիճանի Պարսից բանակի աւարն պիտի ստանայ։*

ՎԱՐԴԱՆ·

*Թշնամեաց բանակի աւարն միմիայն եկեղեցւոյ պայծառութեան և շինութեան պիտի պատկանի, յիշենք հին Իսրայելի յաղթութիւններն. մեք հարստութիւն դիզելու դիտաւորութեամբ չեմք պատերազմում, մեր*

ամենայն ինչ և ստացուածք պիտի զոհենք հայրենեաց և ազգի պաշտպանութեանն և փրկութեանն.

ԱՄԵՆՔԸ (բացի Գատիշոյից և Տիրոցից).

Այո՛, այո՛, թշնամեաց աւարն եկեղեցւոյ պայծառութեան և աղքատաց պիտոյից պատկանի, և մեր ամենայն ինչ հասարակաց լինի.

ՎԱՐԴԱՆ.

Ուրեմն տեսէք, իւրաքանչիւր ոք ձեր գնտերի մէջ ինչ պակասութիւն ունի հոգացէք, կամաւորաց զէնք և զրահ տուէք.

ԱՄԵՆՔԸ.

Արդէն հոգացել եմք այդ պակասութիւններն մեր իւրաքանչիւրի սեպհականութիւնից.

ՎԱՐԴԱՆ.

Ուրեմն առանց յապաղելու այսօր իսկ դէպ ի Տղմուտ գետ, Արտազու դաշտ յառաջ խաղանք, բանենք ամրութիւններն, բանակն պաշտպանողական գծից մէջ պահենք, չթողնենք պիղծ Պարսիկն ոտն կոխի Հայաստանի սուրբ հողի վերայ, որ մորեխի պէս փչացնումեն ընտիր հացաբոյսերն. Համազասպեան, ասա՛ Յովսէփ Կաթուղիկոսին, որ պատրաստ լինին այսօր ճանապարհ ընկնելու Խաչիւ և Աւետարանաւ բանակի առաջ, ինչպէս ի հնումն Մովսէս, Յեսու Տապանակ ուխտիւ, իսկ ի Նորումն Ներսէս Նպատ լերան վերայ. որովհետև մեր Ս. Հայրց աղօթքը զէնքից աւելի զօրաւոր է, և տես որ բոլոր նիզակակիցներս միաբան են մինչև ի մահ պաշտպանել կրօնի, ազգ և հայրենիք.

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Յովսէփ Կաթուղիկոսը Ղևոնդ երիցու և եկեղեցական բոլոր դասու հետ արդէն կազմ է և պատրաստ, ձեր խորհրդի վերջին վճռին է սպասում, Ղևոնդ երեց այս գիշեր մինչ ի լոյս զօրաց մէջ շրջելով մի առ մի քաջալերել է և սրտապնդել իւր ճարտար լեզուով, գրեթէ ամենայն զօրք սովորել են Ս. Գրոց մէջ պատմուած քաջ նահատակաց պատմութիւններն և հրամայել է որ երկչոտներն, թերահաւատներն և ակամայ կամ առ երեսս եկող կամաւորներն ազատութեամբ դուրս գան բանակից. և շատ քչերն զանազան պատճառանօք հեռացան դէպ ի կորստական բաղանիք.

ՎԱՐԴԱՆ.

Քաջ նիզակակիցք իմ, դուք ևս հրամայեցէք ձեր գնտի մէջ եղած թերահաւատներին և վախկոտներին ազատութեամբ դուրս գալ բանակից, ոչ ոք չստիպէ նոցա, վասն զի մեր յոյսը բազմութեան վերայ չէ, մեք Գեդեոնի ընտրութեանը հետևելու ենք, սուր Տեառն և Գեդեոնի պիտի առաջնորդէ մեզ ցրուել թշնամեաց բազմութիւնն.

ԳԱՏԻՇՈՑ.

Ուրեմն ակամայ եկողներն առանց բռնութեան պատաՀելու, կարո՞ղ են չմասնակցել պատերազմին.

ԱՄԵՆՔԸ (բաց ի Տիրոցից).

Այո՛, այո՛, Թերահաւատներն, երկչոտներն և անմիաբաններն կամ ակամայ եկողներն ազատութեամբ դուրս թող գան, ոչ ոք չարգելէ նոցա.

ԳԱՏԻՇՈՑ ԵՒ ՏԻՐՈՑ.

Մեք չկամիմք մասնակցել Հայրենեաց և Ազգի կործանման և զուր արեան. (ելանեն).

ՎԱՐԴԱՆ

Շատերն են Հրաւիրուած, բայց քչերն են ընտրուած, ասում է Յիսուս.

ՀՄԱՅԵԱԿ.

Ուռկանով Հաւաքածներից ընտրութիւն անել, խոտաններ մերժել և բարիներ ընդունել, Յիսուսի Հրամանն է. (Վահրամ ներս մտանէ).

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ.

ՎԱՀՐԱՄ.

Տեա՛րք իմ, Ատրպատականից եկաւ Վահան Գնունին, նա քաջ լրտեսել է Թշնամեաց բանակն, պատմեց Յովսէփի Կաթուղիկոսին իւր տեսածներն և աՀա գալիս է ձեզ մօտ.

ՎԱՐԴԱՆ.

Վահրա՛մ, ասա՛, որ ժողովը ցանկանում է լսել Նորա տեղեկութիւններն, թող Ներկայանայ.

ՎԱՀՐԱՄ.

Շատ բարի (ելանէ).

ԽՈՐԷՆ.

Վահան Գնունին իւր իմաստուն Հնարագիտութեամբ շատ կարևոր գործերի ականատես եղած կլինի, սպասենք Նորա տեղեկութեանց.

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Վահանի . . . բայց աՀա և ինքն Վահան. (Վահան ներս մտանէ).

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀԱՆ.

ՎԱՐԴԱՆ.

(Ոտքէ ելնելով համբուրում է Վահանին), ո՜ղջ է գալուստ քո. փա՛ռք, որում վայելէ պատիւ և փառք.

ԱՄԵՆՔ.

Յաջողութի՜ւն, յաջողութի՜ւն.

ՎԱՀԱՆ.

Պատուական Տիարք, ես յաջողեցայ մտնել Պարսից բանակի մէջ իբրև Վասակի կուսակից. բոլոր բանակն և նոյն իսկ Մուշկան Նիւսալաւուրտը թերահաւատում է յաղթութեան. մեր միութիւնը մեծ երկիւղի մէջ է գցել թշնամուն. Վասակ յայտնեց իւր կուսակցաց, որ Միհրներսէհի ձեռօք ստացել է Հայոց վերայ թագաւորելու իշխանութիւն և գինի յաղթութեան կստանայ թագ և գաւազան. Միհրներսէհ գնաց արքայի մօտ և բոլոր բանակն յանձնեց Մուշկան Նիւսալաւուրտին և Վասակին. նոքա կարգադրեցին բանակն. կատաղի փղերն խումբ խումբ բաժանեցին Արտաշրի առաջնորդութեամբ և իւրաքանչիւր գաղանին երեք հազար սպառազէն. բոլորի ուշադրութիւն պիտի լինի Վարդանի զօրաբաժնի վրայ յարձակել, պատրաստւեցան գալ Արտազու դաշտ և յարձակողական գիրք բռնել, հրամայեցին զօրաց անխնայ կոտորել արք և կանայք, ծերք և մանկունք, հրոյ ճարակ անել եկեղեցիններն. իսկ Վասակ խաբում էր իւր կուսակիցներին թէ, Յազկերտ կրօնի ազատութիւն է տուել, բայց Վարդան և իւրայինք կաշառուած Յունաց կայսերից՝ ապստամբել են, նաև խոստացաւ ուրացողներին և միամտութեամբ իրան հետևողներին թէ, հին նախարարաց տոհմը պիտի ջնջուի և նոր նախարարաց տոհմեր պիտի նշանակւին իւր թագադրութեան օրը. նոքա պատրաստւեցան յառաջ խաղալ. ես փութացի Հայաստան, Տղմուտի մօտ պատահեցայ մի Պարսկի և մի Հայու, նոցա պատ ի պատ հակասական խօսքերից գուշակելով որ լրտես էին, երկուքին ես Տղմուտին յանձնեցի, և ահա նոցանից խլած մատնութեան և դաւաճանութեան նամակներն. (կու տայ Վարդանին).

ԱՄԵՆՔԸ.

Կեցցէ Վահան Գնունի.

ՎԱՐԴԱՆ.

(Ցոյց տալով Նամակին վաւերական կնիքը) պատուական նիզակակիցք, տեսէ՛ք Վասակայ մատանու վաւերական կնիքն, (Դէ — Դէ կը տեսնեն)

ԱՄԵՆՔՆ.

Այո՛, դաւաճանի կնիքն է, կարդացէ՛ք.

ՎԱՐԴԱՆ.

(կը կարդայ) «Վասակ Նորապսակ արքայ Հայոց, պաշտպան Հայրենեաց, իմ սիրելի Տիրոց իշխանին Բագրատունեաց և Գադիշոյ իշխանին Խորխոռունեաց ողջոյն.

Այսօր Միհրներսէհ հրամանաւ Յազկերտի անուանեց զիս թագաւոր Հայոց, ես զձեզ ինձ հաւատարիմ ճանաչելով և միանգամայն հօգատար Հայրենեաց, խոստանում եմ յետ յաղթութեան կարգել զձեզ (Գադի-

հոյ) ընդհանուր սպարապետ և (Տիրոց) թագաւոր Սիւնեաց թագաւորաց․ աշխատեցէք զօրաբաժիններ ձեր իշխանութեան ներքոյ առնել, և ճակատամարտի ժամանակը ձեր կուսակիցներով շփոթութիւն գցել բանակի մէջ, յաղթելու փոքր հարկանել, խոյս տալ, մեր կողմն անցնել. եթէ հնար է նոյն միջոցին Վարդանին և իր համախոհներին վտանգելու կամ մեր ձեռք գերի ձգելու միջոցներ գտէք․ իսկ եթէ այս չյաջողի ձեզ, գոռացէք թէ «Վարդանն ընկաւ»։ վերջապէս ամենայն տեսակ հնարքներ հնարեցէք իմաստութեամբ, որպէս զի առանց բազում արիւնհեղութեան կարող լինինք հասանել մեր նպատակին»։

Յառաջին ամի Թագաւորութեան Սիւնեաց․

Վասակ Վարդապետեան

Նախարարաց արքայ Հայոց։

ԱՄԵՆՔ․

Անիծեալ լինի Վասակայ և իր կուսակցաց յիշատակն։

ՎԱՐԴԱՆ․

Համազասպեան, փութա բանել Գատիշոյ և Տիրոց գաւաճան իշխաններին։

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ․

Կորչին մատնիչք Հայրենեաց․ (կը մեկնի)։

ՎԱՐԴԱՆ․

(Ցոյց կուտայ միւս նամակն) Տեսէք նաև Զանգակ և Պետրոս ուրացող քահանայից կնիքներն։

ԱՄԵՆՔ․

(Դիտելով նամակի կնիքն) Այո, այո․ նոցա կնիքներն են և մատնիչ ձեռագիրն։

ՎԱՐԴԱՆ․

(Կը կարդայ) «Զանգակ և Պետրոս Երէցք Սիւնեաց, Մոգպետ և Ատրուշանապետ մեծին Հայաստանի՝ Սահակ Սարկաւագի Սիւնեաց ողջոյն։

Այսօր պատիւ ունեցանք ներկայանալ Միհրներսեհին և նորա հրամանով կարգեցանք մոգպետ և ատրուշանապետ Հայոց, բոլոր Հայ քահանայից ինչք և ստացուածք, կանայք, հարսունք և աղջկունք մեզ պարգևեց, մեք իրաւունք ունիմք տալ ում որ կամենանք, զքեզ կարգում ենք Ատրուշանապետ Արտաշատու, և նոյն տեղի բոլոր քահանայից ստացուածք և նոցա աղջկունք և հարսունք և կանայք քեզ սեպհականութիւն․ միայն թէ աշխատիր եկեղեցականաց և նախարարաց մէջ խռովութիւն գցել, նոցա միութիւնն քանդել և միմեանց կասկածելի ցոյց տալ, վկաներով հաստատեցէք, որ Յովսէփ Կաթուղիկոս, Սահակ Եպիսկոպոս և Ղևոնդ երէց կաշառել են Յունաց կայսրից և կամենում են Հայոց եկեղեցին միացնել Յունաց եկեղեցւոյ հետ․ որի համար ապստամբել են Արեաց դռնից․

Վերջապէս աշխատեցէք երկպառակութիւն ցցել Վարդանայ զօրաց մէջ, որպէս զի կարողանանք յաղթել և մեր նպատակին հասանել. Թերևս քեզ. որից յետոյ կոխանուիմք»:

Զանգակ հնչեն հայոց.

Պետրոս արքեպիսկոպոսն հայոց.

Յառաջին ամփ լուսաւորութեան Հայաստանի

ԽՈՐԷՆ. ԱՐՏԱԿ. ՀՄԱՅԵԱԿ.

Կորչին անարժան Բդեշխի ձեռնադրած անարժան պաշտօնեայք.

ՏԱՃԱՏ.

Գնամ՝ որսնել ամբարիշտ Սահակին. (կը մեկնի).

ՎԱՐԴԱՆ.

Նախ դաւաճանները ձերբակալել և ապա յառաջ խաղալ. (Համագումարն կը մեկնի).

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Տեարք իմ, Գադիշոյ իշխան անմիջապէս խոյս տուել է դէպ ի Պարսկաստան իր գնդովը, միայն յաջողեցայ բռնել Տիրոց իշխանին, կամենում էի բանտարկել. Ղևոնդ երէց վրայ հասաւ և հրամայեց իսկոյն քարկոծեցին.

ԱՄԵՆՔ.

Կորչին մատնիչք Հայրենեաց.

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Եղիշէի Կաթողիկոսն և համայն եկեղեցական դասն կազմ է և պատրաստ յառաջ խաղալու.

ՎԱՐԴԱՆ.

Օ՛ն և մեք. (Վարդան կը մեկնի).

ՏԵՍԱՐԱՆ Է

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ

ՎԱՀՐԱՄ.

Քաջազուն Տեարք, բանակի մէջ գտայ մի Պարսիկ լրտես, զոհեցի սաբուշանին, ահա նորանից խլած նամակն.

ԱՄԵՆՔ.

Կեցցես քաջ Վահրամ.

ՎԱՐԴԱՆ.

(Նամակ բաց կանէ) «Ահա և Սահակ սարկաւագի դաւաճանութիւնն. (կը կարդայ) Սահակ սարկաւագ Արշակունի քեռին Վասակայ պաշտպանին հայրենեաց խնդալ.

Այլ ևս զուր է աշխատիլ քանդելու Վարդանայ բանակի միութիւնն. աշխարհական և եկեղեցական միացել են ինչպէս մարմին և հոգի. ամբողջ Հայ ժողովուրդ իբրև Աստուծոյ պատգամ է ընդունում Եղիշէի Կաթողիկոսի և Ղևոնդ երիցու հրամանները, բոլոր իշխանները լսում են Վարդանին, բանակն այսօր յառաջ պիտի խաղայ դէպ ի Արտազու դաշտն, և այսօր բոլոր կասկածաւորներին խուզարկում են. Վարդան իր ազատ կամք զօրքն չորս մասն բաժանեց, մեր կուսակիցներից ոչ մին զօրավարին զօրապետութեան պաշտօն չտուեց. Դատիշոյ և Տիրոց իշխանաց աշխատանքներն զուր անցան. Զանգակ և Պետրոս քահանայք կրկին չգտանեն Հայաստան, անշուշտ կբռնուին, նոյնպէս և դուք խնայեցէք ձեր անձին վեհազուն Տէր, կրկին չմտնիլ Հայոց բանակի մէջ..

Ս—հ—լ Ս—րէ——ք Սէ—նեցէ.

ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ.

Ո՛հ, Հայաստանի ներքին թշնամի մատնիչների եղեռնագործութիւնք աւելի վտանգաւոր են քան Յազկերտի և Մոգպետի չարիքներն.

ՎԱՐԴԱՆ.

Չէք, չէք փառաց. չէք յաջողուած,
Երկնից գոչէ որ Եղն Աստուած.
Միացին մատնիչք մարզպան Վասակ,
Սուտ քահանայք Պետրոս Զանգակ.

(Պետրոս և Զանգակ առանձնայն կը մտնեն).

ՏԵՍԱՐԱՆ Ը

ԱՌԱՋԻՆՔ, ԶԱՆԳԱԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ.

ԶԱՆԳԱԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ.

Ողջոյն ձեզ քաջազունք Հայոց.

ՎԱՐԴԱՆ.

Ի բաց, ի բաց, մատնիչք Հայրենեաց, Իսկարիովտացիներ, թողէք այդ որոմնացաններն.

ԶԱՆԳԱԿ.

Մեք չեմք որոմնացան, այլ քարոզող բանին Ճշմարտութեան.

ՊԵՏՐՈՍ.

Ափսոս, որ առանց կարդալու մեր սիրտը, դատէք մեզ յանիրաւի.

ԽՈՐԷՆ.

Շղթայի զարնուին այդ խաբեբայ մատնիչներն. ձեր սրտերը մատեան սատանայի են և միայն Սատայէլ կարող է կարդալ. (Իշխան զինուոր նոյն կը մտնեն, շղթայ կը զարնեն Պետրոսին և Զանգակին Վարդանի հրամանաւ).

ԶԱՆԳԱԿ։

Մեք Քրիստոսի փոխանորդներ ենք, դուք բնաւ իրաւունք չունիք Աստուծոյ օծեալին ձեռք մխել, մեք իշխանութիւն ունինք Յիսուսից՝ կապել և արձակել ձեր հոգին և մարմին, մեր կապածն կապւում է երկնքում և արձակածն արձակւում է, դուք մեզ չլսելով և արհամարհելով Յիսուսին չէք լսում և արհամարհում էք։

ՊԵՏՐՈՍ։

Դուք ուրացող մոխրապաշտներ, գնացիք Պարսկաստան, ուրացայք զՔրիստոս, կրակ պաշտեցիք, այժմ ես միացած Յունաց հետ, ապստամբում էք և զուր կոտորում էք ժողովուրդ, անիծեա՛լ և նզովեա՛լ լինիք։

ՎԱՐԴԱՆ։

Պատանձեցէ՛ք անզգամ մոգեր, ձեզ նման գայթակղիչների պարանոցներից մի մի մեծ քար կախել և ծովու յատակն իջեցնել Յիսուսի հրամանն է։

ՀՄԱՅԵԱԿ։

Երբ մեք չհնազանդէինք Սմբատ Բագրատունւոյն, այս մատնիչներին Մեհրուժանի շամփուրէ պսակաւ պսակելու, մեր Հայրենեաց կը փոսենք, դուք գայթակղութեան քար պիտի դառնան և շատերի կորստեան պատճառ պիտի լինին։

ԶԱՆԳԱԿ։

Մեք ի սէր Քրիստոսի և փրկութեան Հայրենեաց պատրաստ ենք կրել ամենայն հալածանք և նախատինք, բայց դուք ուրացողներ, խնայեցէք անմեղ արեանց, որոց պարտական պիտի լինիք Աստուծոյ առաջ, թողէք որ փոքր ինչ ցամաքին Հայաստանի լեռներն և դաշտերն Հայոց արիւնից, զուր մի՛ պատերազմիք, այսօր Վասակ հրովարտակ ստացաւ Յազկերտից, կրօնի ազատութիւն և ամենայն յանցաւորաց կատարեալ ներողութիւն է շնորհել, Պարսից զօրքն եկել է Վասակին թագաւոր կարգելու, դուք եթէ սիրում էք Հայրենիք, Ազգ և Կրօն, սիրով ընդունեցէք մեր Հայկազուն թագաւորնին, առանց խռովութեան և անմիաբանութեան կործանիչ նըպատակին և գաղափարին հետևելու։

ՎԱՐԴԱՆ։

Անզգամ խաբեբաներ, Վասակայ պիղծ գլուխն անգամ չի արժանանայ Հայաստանի հողի մէջ թաղուելու. ամաչեցէք ձեր այս դաւաճանող նամակներից (ցոյց կը տայ Նամակները)։

ԶԱՆԳԱԿ։

(Նամակը ձեռը տեսնելով) Այդ մեր գրածներ չեն. և մեր կնիքներ չեն, խարդաւանանք է, կը բողոքենք մարդկան և Աստուծոյ առաջ։

ՊԵՏՐՈՍ։

(Նամակները տեսնելով) Ոչ իմ գիրս է և ոչ կնիքս, խարդախ կնիք է, Ղևոնդ երիցու գործն է, կը բողոքեմ Աստուծոյ արդարութեան։

ՏԱՃԱՏ.

Զօրանայ ձեռն, որ միշտ զօրամ
Տանէ Հայոց անդաստաններ,
Կուրանայ աչքն այն վատատես,
Որ սպասէ պտուղն քաղել.

ՀՄԱՅԵԱԿ.

Ամօթ, ամօթ ձեր վատ ճակտին,
Որ միշտ սիրէք զբաժանումն.
Բաժանուեցէք դուք մեր մէջից,
Որ նախատինք էք Հայ անուան.

ԳԱՐԵԳԻՆ.

Միայն բանիւ լոկ ազգասէր
Զեռնայք դուք կեղծաւորներ,
Ապականիչ չար աղուէսներ,
Մատնիչք ազգի, անարգ ցեցեր.

ՎԱՐԴԱՆ.

Կորչին մատնիչք մարզպան Վասակ,
Սուտ քահանայք Պետրոս Զանգակ
Եւ գործակից նոցին Սահակ,
Պիղծ մէհենին վատ սարկաւագ,
Անհետացի անյիշատակ.

Փութով բանտարկեցէք այդ ազգուրաց, կարգընկէց դաւաճաններին, յետ յաղթութեան ընդհանուր դատաստանաւ քննելու.

ՊԵՏՐՈՍ.

Ափսոս, որ չէք ճանաչում ազգի և հայրենեաց օգուտն, դուք ձեր անմիաբանութեամբ և խամոլութեամբ կործանումէք Հայրենիք, Ազգ և Կրօն, չլսելով Հայրենասէր Վասակայ.

ՎԱՐԴԱՆ.

Հեռացէք անզգամներ, եթէ մեք չխաբուէինք Վասակայ սուտ երդմանց և կեղծաւորութեանց, արդէն յաղթող հանդիսացել էինք այժմ. այն չարեաց վաստակ Վասակ, կամակից և որջ սատանայի փառամոլ Վասակ եթէ չլինէր, գուցէ և Յազկերտ կրօնի խնդիրը մաքից անգամ չէր անցկացնում, նա իբրև Հայոց խօսքով խաբեց Յազկերտին, որպէս ոչ յարգ գտնէր նորա մօտ, տիրէր Հայոց, և Վարազվաղանից առնէր իւր վրէժն. նա արդէն կրկին և կրկին փորձուել է, Աստուծոյ և մարդկան կշռից ու փորձաքարից անցել է և ցոյց է տուել իւր ժանդոտութիւնն.

ԶԱՆԳԱԿ.

Արիւն ձեր ի գլուխ ձեր եղիցի. մենք անպարտ եմք անմեղ արեան. Հայ-

*բնենաց կործանման. մեր արիւն եւ խառնեցէք զուր թափած արեանց հետ, որ բողոքէ Աստուծոյ արդարութեան ի վրէժխնդրութիւն.*

ՎԱՐԴԱՆ.

*Բաւական է զառանցել, Վահրամ հեռացրէք այդ ուխտադրժի գայ-ները. (Վահրամ և երկու ընկերները դուրս են գնում Զանգակին և Պետրոսին).*

ԶԱՆԳԱԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ.

*(Դողից) Պատմութիւն և աշխարհն պիտի վկայեն մեր արդարութեան և ձեր անիրաւութեան. (Կը գնեն. Տաճատ մտնէ).*

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՏԱՃԱՏ.

ՏԱՃԱՏ.

*Տեառք իմ, Սահակ սարկաւագը անմիջապէս խոյս է տուել դէպի Պարս-կաստան Գադիշոյի գնդի հետ. մեր յառաջապահ զօրքն Առանձար Ամա-տունու առաջնորդութեամբ մեծ ջարդ է տուել Պարսից հրոսակներին յայսկոյս Տղմուտի, ուր եկած էին աւար յափշտակելու.*

ՎԱՐԴԱՆ.

*Օ՜ն ուրեմն և մեք, թող հարկանեն փող արշաւելոյ, թող ծածանի Խաչի դրօշակը. (Վահրամ կը մտնէ).*

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ.

ՎԱՀՐԱՄ.

*Տէր իմ. տիկին Դստրիկ Վարդ մանուկ գրկած Տարօնոյ կամաւոր զօրա-խմբի և կանանց հետ բանակի մէջ մտաւ, ես ճանաչեցի նորան, բայց խնդրեց, որ չյայտնեմ ձեզ, որ միգուցէ արգելք լինիք իւր նպատակին.*

ՎԱՐԴԱՆ.

*Ո՛չ, ո՛չ, ես չեմ զրկում զինքն լուսեղէն պսակից, կարող է իրագործել իւր նպատակն, դորանով նա ցոյց է տալի թէ Վարդանայ արժանաւոր ա-մուսին է. կանանց յարմարաւոր զէնքեր բաժանիր Վահրամ և Դստրիկին Վարդի հետ տար Համազասպեանի վրանը, հոգա ճանապարհի պակա-սութիւններն.*

ՎԱՀՐԱՄ.

*Շատ բարի. (կը մեկնի).*

ՎԱՐԴԱՆ.

*Փողեր հնչուին, բոլոր զօրագլուխներն և պաշտօնակալներ հաւաքուեն խա-չադրօշի տակ վրանի հանդէպ, (Խաչէ դրօշակ կը բացուի, փողեր կը հնչուին, զօ-րագետներ երեւելով կը գան կը համբուրեն դրօշն անոր, նոյնը մէջ կը մտնեն և բոլոր նախարարք բացի Վարդանէն).*

### ԵՐԳ.

Քաջին Հայկայ նա է զաւակ,
Մեր սուրբ կրօնին նա է հպատակ,
Որ զանձն զոհ տայ իւր ազգին,
Նորա լեզուին և կրօնին.
    Կեցցէ կրօն Քրիստոսական,
    Մեռցին ոսոխք մեր յաւիտեան,
    Կեցցեն հլու Հայկայ որդիք,
    Մեռցին ըմբոստ մեր թշնամիք.
Կեցցեն պաշտպանք մեր կրօնին,
Մեռցին նենգողք Հայոց ազգին,
Կեցցեն քաջեր, մեռցին վատեր,
Մեռցին Վասակ և դրժողներ.
    Կեցցէ սուրբ սէր և միութիւն,
    Կեցցէ Վարդան մեր քաջազուն,
    Նիզակակիցք իւր համազգոյն
    Կեցցեն պաշտպանք եկեղեցւոյն.
Կեցցէ կրօն մեր լուսատու,
Կեցցէ Աթոռն Արարատու,
Կեցցէ յաւէրժ Հայկայ ոգին
Ոսոխն տացէ զԲելայ բաժին.

### ՎԱՐԴԱՆ.

([illegible]) Սիրելի ընկերակիցներս, ձեզ հետ շատ պատերազմների մէջ մտել իմ՝, շատ անգամ՝ յաղթող հանդիսացել եմք և մեծամեծ պարգևներ ստացել եմք մահկանացու թագաւորից. բայց այս պատերազմը անմահ թագաւորի հրամանաւ է, աւելի պարտաւոր եմք քաջութեամբ նահատակուել, չվախենալով հեթանոսաց բազմութիւնից. Յիշեցէք Գեդէոն, յիշեցէք Մակաբայեցիք, յիշեցէք մեր նախահայրն Հայկ, յիշեցէք մեր յաղթութիւնն Աղուանից մէջ. այս ամէնը Յիսուսի յաջողութիւնն էր միայն, յիշեցէք, որ մեք այս նպատակի համար առ երեսս ուրացանք մեր հաւատը Պարսից դուռն, որպէս զի Հայաստան վերադառնալով և ձեզ հետ միանալով փրկէինք մեր եկեղեցին, և մեր արիւնով լուանայինք մեր ուրացութեան կեղտն. Քաջ ընկերակիցք իմ՝, այս մեծ բաղդ և պատիւ է մեզ, Աստուծոյ օրինաց վերայ դնել մեր անձներ, և ստանալ երկնքում անթառամ պսակ, իսկ երկրի վերայ բարի անուն. Թէ յաղթենք և թէ յաղթւենք վարձք կստանանք, աշխատենք յաղթել և ազատել մեր եկեղեցին հեթանոսաց ձեռքից, որ կամենումեն տարուշան դարձուցանել և մեզ և մեր որդիք մոխրապաշտ անել, հոգւով և ազգութեամբ կորուսանել, ջնջել յերկրէ Հայ անուն և Հայ եկեղեցին.

ԶՕՐԱՊԵՏՔ.

*Ի սէր փրկութեան Հայրենեաց, Ազգի և Կրօնի պատրաստեմք և ուրախ մեր արիւնը թափելու.*

ՎԱՐԴԱՆ.

Օ՛ն ուրեմն դէպի ս. պսակ (կոչման ձայն հարկանել և երգել).

ԵՐԳ.

*Որք մարտիկք զօռ Հայկազեան,*
*Ի շէն, ի ռազմ, ի գուպար,*
*Զփոխման ղեւաց պիղծ Սասանեան*
*Վանել իբրաց քաջաբար.*
*Վհատութիւն ո՛ն քաջ իբրաց,*
*Ի մեր սրտից բարձցի թող.*
*Զի Աջ Եին Հօրն իբարձանց*
*Օձան բազկացս է յաղթող.*
*Գունդք աղուխուց վատասրտաց*
*Ազգին զղզումն, սարսափ յոյժ,*
*Պողովատիկ սուրք ղեւցազանց*
*Ի սիրտ նոցին խուժայուժ,*
*Օ՛ն անդր յառաջ,*
*Դուք կորովիք,*
*Աներղին աջ՝*
*Ձեզ զօրաւիգ.*

(Զօրք կոչման ամէն զբաղեալ անցանել խաղալով զբօսանքն հետևելով, Վարդան ամէներ պատենից հանած զբօսանքն մօտից ընդ....).

Վարագոյր կիջնէ

(Վարագոյրը ծածկած ժամանակը մի կարգացուի է «Հիշի իմ լուծել» երգն. տես Դ. Ֆարձաղղոնիան ձեռքի).

(Կշարունակուի) Ս. Գնանէ։

---

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԵՂՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ԴԱՐՎԻՆԻ ՊԱՆԳԵՆԵԶԻՍ.

*Այն անկիւնը, ուր կարելի է հանգստանալ, յուսով նայել ապագայի վերայ, թողնել յուսահատութիւնը, սթափել ընդհանուր անզգայութիւնից և ցանկանալ միշտ յառաջ և յառաջ երթալ առանց յետադիմութեան — գիտութիւնն է. նա համարձակութեամբ բանում է իւր փառքով ծածկած դրօշակը և քաղցրութեամբ կանչում է իւր ազնիւ հպատակներին. Եւ քաղցր է տեսնել թէ՝ ինչպէս ամենայն տեղ՝ ուր նա երևում է, կա-*